

ՃՅՈՒՂ	Միկրո ձևնարկություն	Փոքր ձևնարկություն	Միջին ձևնարկություն
1. Արդյունաբերություն	մինչև 5	6-ից 50	51-ից 100
2. Շինարարություն, Առևտուր, ճրտակառուցություն	մինչև 5	6-ից 25	26-ից 50
3. Գյուղատնտեսություն, Ստալայություններ	մինչև 5	6-ից 10	11-ից 25
4. Այլ ոլորտներ	մինչև 5	6-ից 20	21-ից 40

Այլ ձևնարկությունների փայլամասնակցությունն այս ձևնարկություններում չպետք է գե-
րազանցի հիմնադիր կապիտալի 25 %-ը»:

Պետք է նշել, որ այստեղ առաջին անգամ փոքր ձևնարկության սահմանման մեջ նա-
խատեսված է ներառել որակական շահանիշ՝ ֆինանսական ինքնուրույնության շահանիշը: Հե-
տագայում կօգտագործվի սույն սահմանումը Հայաստանի փոքր ձևնարկությունների վերա-
բերյալ:

**ՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՐՈՒՄ**

Վերջին տարիներին Հայաստանում իրագործվեցին մի շարք նպատակաուղղված տնտեսա-
կան բարեփոխումներ, որոնք նպատակ ունեին փոխել տնտեսության գործելակերպը և ստեղծել
գերակշռող մասնավոր հատված: Առաջին նշանակալի քայլը ՀՀ «Գյուղացիական և գյուղացիա-
կան կոլեկտիվ տնտեսությունների մասին» (22. 01. 90) օրենքի ընդունումն էր և այդ օրենքի
հիման վրա իրագործված գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհումը: Սեփականաշնորհ-
ման արդյունքում ստեղծվեցին մոտ 315 հազար մասնավոր գյուղացիական տնտեսություններ:

Արագորին իրականացված հողի սեփականաշնորհումը դարձավ ՀՀ կառավարության լուրջ
նվաճումներից մեկը: Գյուղատնտեսության բնագավառում անցկացված հաջող ռեֆորմները գրա-
վական դարձան տնտեսության այլ ճյուղերում ռեֆորմների իրագործման համար: ՀՀ «Պետա-
կան ձևնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման մա-
սին» (27. 08. 92) օրենքի համաձայն, 1994 թ.-ից Հայաստանում սկսվեց վառարարային սե-
փականաշնորհումը: Սեփականաշնորհման գործընթացի զարգացմանը զուգընթաց Հայաստանում
սկսեց ինտենսիվորեն ձևավորվել փոքր ձևնարկության ոլորտը:

Դիտարկենք այս նորաստեղծ ոլորտի կառուցվածքը: Արդեն 1997 թ. վերջին հանրապե-
տությունում սեփականաշնորհված էին 1333 խոշոր և 6150 փոքր ձևնարկություններ: Ըստ ՀՀ
վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծությունների վարչության տվյալների, 01.
01. 98-ի գրուվյալը Հայաստանում գրանցված էին 77 639 տնտեսավարող սուբյեկտներ, որոն-
ցից 39 952-ը (մոտ 52 %) կազմում էին անհատ ձևնարկությունները: Սակայն, պետք է հաշվի
առնել, որ գրանցված ձևնարկությունների մի մասը իրականում չի գործում, իսկ գործող ձևնա-
րկությունների որոշ մասը շուտի գրանցում: 1997 թ. հունիս ամսին ՀՀ ֆինանսների նա-
խարարությունը հրապարակեց մի հետազոտության արդյունքներ, որոնք վկայում են, որ ստվե-
րային տնտեսության շրջանառությունը ՀՀ պաշտոնական համախառն ազգային արդյունքում
(ՀԱԱ) կազմում է մոտ 40—53 %: Այլ գնահատականներով սև շուկայի մասշտաբները հաս-
նում են մինչև ՀԱԱ 70 %: Այս թվերը համընկնում են նաև ԱՊՀ այլ պետություններում կա-
տարված հետազոտությունների արդյունքների հետ: Գրա հետ մեկտեղ Հայաստանում գրանց-
ված ձևնարկությունների մոտ 50 %-ն առևտրի ոլորտում է, իսկ ժառանգությունների և ար-
տագործության ոլորտները կազմում են 25-ական տոկոս³: Այն փաստը, որ մասնավոր ձևնե-
րկության ոլորտում գերակշռում են առևտրով և ժառանգություններով զբաղվող ձևնարկու-
թյունները, կարելի է բացատրել այսպես.

- 1) Անցումային շրջանի սկզբնական փուլում նկատվում էին մակրոտնտեսական միտումներ,
որոնց բնորոշ էր սղաճի բարձր մակարդակ, որոշ ժամանակաշրջանում նույնիսկ հիպեր-
սղաճ: Հիպերսղաճը բացառում է գործունեության այնպիսի տեսակների զարգացումը, ո-
րոնք նախատեսված են իրկարատե ժամանակաշրջանի համար (օրինակ՝ այնպիսի նախա-
գծեր, որոնք ներառում են արտադրական գործընթացներ):

³ ՏՆՏ «Статистический отчет по России и странам СНГ» Межгосударственный
статистический комитет, 1997, էջ 48—50:

⁴ ՏՆՏ «Состояние малых и средних предприятий в Армении, Возможности для
финансирования», отчет работы экспертов КfW в Армении, Ереван, 1997, էջ 27—28:
206

2) Անևտրական կամ ծառայություններ մատուցող ձևանարկություն ստեղծելու համար ավելի քիչ ներդրումներ են հարկավոր, և հեշտ է այդպիսի ձևանարկությունների զեկավարումը: Այսպիսով, 1990—1993 թթ. անկառավարելի տնտեսության պարագայում առևտրական և ծառայություններ մատուցող ձևանարկությունների զանգվածային ստեղծումը տրամաբանական էր:

3) Պլանային տնտեսությանը բնորոշ արտադրական կառուցվածքը, ինչպես նաև աշխատանքի բաժանումը նախկին ԽՍՀՄ-ում այնպիսին էր, որի դեպքում նեղ մասնագիտացված արդյունաբերական ձևանարկությունները տեղակայված էին որոշակի շրջաններում, որտեղից նրանք արտադրանքը առաքում էին ամբողջ շուկայի համար: Մի շարք ապրանքատեսակներ և հումքանյութեր արտադրվում էին Հայաստանից դուրս և ներկրվում էին արհեստականորեն ցածր տրանսպորտային ծախսերով: Խոշոր արդյունաբերական այդ համալիրների տրոհումը և աստիճանական փլուզումը հանգեցրեց սպրանքների սուր դեֆիցիտի Հայաստանում: Նման պարագայում առաջացած փոքր ձևանարկությունները կազմակերպեցին սովյալ ապրանքատեսակների տեղական արտադրությունը, ներմուծումը և առևտուրը:

1997 թ. կարելի է համարել ՀՀ տնտեսական բարեփոխումների կրկրորդ փուլի սկիզբը: Որոշակի փոփոխություններ իրականացվեցին հարկային օրենսդրության մեջ (մասնավորապես եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի և շահութահարկի վերաբերյալ), որոնք նպատակ ունեին ավելի բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանում ձևանարկության զարգացման համար: Ընդունվեցին նաև կառավարության մի շարք որոշումներ, որոնք վերաբերում էին առևտրի և ծառայությունների ոլորտում հաստատագրված վճարումների կիրառման, հաշվարկման և գանձման կարգին: Անկախ այն բանից, որ վերը նշված խնդիրների պատճառով դժվար է գնահատել փոքր ձևանարկատիրության ոլորտում իրականացվող տնտեսական գործունեության մասշտաբները, ստորև կփորձենք հիմնավորել այդ ոլորտի բացառիկ կարևորությունը Հայաստանի տնտեսական զարգացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացման տեսանկյունից:

Առաջին հերթին պետք է նշել, որ բոլոր հետազոտությունները, այդ թվում նաև պաշտոնական, վկայում են այն մասին, որ փոքր ձևանարկությունների դերը, իբրև Հայաստանի տնտեսական աճի գործոն, վերջին տարիներին ավելի նշանակալի է դառնում: Դա բխում է առևտրի և ծառայությունների ոլորտի օգտին կատարված տնտեսական ակտիվության վերաբաշխման ստորև բերված վերլուծությունից, որից երևում է փոքր ձևանարկությունների գերակշռող դերի բարձրացման միտումները:

22 ՀԱԱ ճյուղային կառուցվածքը⁵

	1994	1995	1996	1997	1998 (կանխատեսում)
Ծառայություններ	7.9 %	9.8 %	13.2 %	13.7 %	14.1 %
Առևտուր	4.5 %	9.5 %	9.6 %	9.1 %	9.0 %
Շինարարություն	6.7 %	8.5 %	9.6 %	10.5 %	11.2 %
Գյուղատնտեսություն	43.5 %	36.7 %	33 %	28 %	27 %
Արդյունաբերություն	29.1 %	24.3 %	23.8 %	24.1 %	24.3 %

Ինչպես երևում է աղյուսակից, 1994 թ.-ից սկսած ՀԱԱ ճյուղային կառուցվածքում տեղի է ունեցել ծառայությունների և առևտրի ոլորտի ակնառու աճ: Բացի այդ, նկատվում է ծառայությունների ոլորտի աճի հստակ միտում: Ինչպես հայտնի է, այս ոլորտներում գերակշռում են փոքր և միջին ձևանարկությունները: Օրինակ՝ քաղաքային և մերձքաղաքային ուղևորատար տրանսպորտի բնագավառում գերակշռում են անհատ ձևանարկության հիմքի վրա գործող տնտեսավարող սուբյեկտները: Փոքր և միջին ձևանարկություններից է կազմված նաև ամբողջ մանրածախ առևտրի ոլորտը: Վերջին տարիներին բազմաթիվ փոքր ձևանարկություններ ստեղծվեցին նաև շինարարության և արդյունաբերության ոլորտներում: Այսպիսով՝ ակնառու է փոքր ձևանարկությունների աճի դերը՝ որպես տնտեսական աճի բաղադրամաս:

Երկրորդ կարևոր հանգամանքը փոքր ձևանարկությունների դերն է՝ որպես զբաղվածության աղբյուր: Այն ձևանարկություններում, որոնք նախկինում պետական սեփականություն էին, արտադրանքի ծավալի կրճատման հետևանքով զգալիորեն նվազել է զբաղվածությունը: Վերջին շրջա տարիներին փաստացիորեն գործազուրկ են դարձել ավելի քան 200 000 մարդ,

⁵ ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի ելույթը, Հայաստանի ամերիկյան համալսարան, մարտ, 1998 թ.:

Հիմնականում Հայաստանի գյուղական շրջաններում: Դեռևս բազմաթիվ չլուծված խնդիրներ կան սեփականաշնորհման հետևանքով սակզծված խոշոր մասնավոր արդյունաբերության մեջ: Սեփականաշնորհումից հետո ձեռնարկությունների ընդամենը 5 %-ն է կատարել որևէ ներդրում: Այդ պատճառով այս ոլորտը դեռևս ընդունակ չէ բավարար լափով աշխատատեղերով ապահովել գործազուրկներին: Այս ֆունկցիան մասամբ իր վրա է վերցրել փոքր ձեռնարկատիրության ոլորտը: Այսպես, օրինակ, գործազուրկների մի մասն ինքն է սկսում իր սեփական գործը և դրա հետ մեկտեղ՝ գրաղվածությամբ ապահովում ևս մի քանի մարդ: Իսկ դա նշանակում է, որ ՀԱԱ ճյուղային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները, ի օգուտ փոքր ձեռնարկությունների տոկոսի աճի, առաջ բերեցին նաև փոփոխություններ գրաղվածության ճյուղային կառուցվածքում:

Հայաստանի տնտեսական համակարգի կայունացման, նորացման և զարգացման գործոնները անմիջականորեն կապված են փոքր բիզնեսի բնագավառում ռազմավարական որոշումների ընդունման հետ: Հայաստանի տնտեսական զարգացման աղբյուրներից մեկը պետք է դառնա փոքր բիզնեսի գործոնը: Փոքր բիզնեսը բոլոր զարգացած երկրներում ժամանակակից շուկայական ենթակառուցվածքի հիմքն է, որը երբևէ կանխորոշում է տնտեսական աճի տևալտերը, համախառն աղբյուրի արդյունքի կառուցվածքն ու որակը: Իրոք, լավ զարգացած փոքր շուկայական ենթակառուցվածքը թույլ կտա հավասարակշռել հակասությունները պետական կառավարման և շուկայի ինքնազարգացման միջև՝ ձկուտության ու բազմազանության աճի հաշվին ապահովելով ավելի հարմարվող, կայուն, կանխորոշելի և կառավարելի շուկայական միջավայր: Հենց այս գործոններով է պայմանավորված փոքր բիզնեսի ոլորտի պետական կարգավորման ձգտումը:

Այժմ տեսնելը, թե որոնք են Հայաստանում գործունեություն իրականացնող փոքր բիզնեսի այն առանձնահատկությունները, որոնցով հատկապես կարևորվում է նրա դերը որպես տնտեսական զարգացման գործոն:

- 1) Հայաստանում իրականացվեցին արմատական կազմակերպչական և տեխնիկական փոփոխություններ, որոնց շնորհիվ փոխվում է խոշորամասշտաբ և փոքրամասշտաբ արտադրության միջև հարաբերակցությունը: Սեփականաշնորհումն ու խոշոր արդյունաբերական համալիրների տրոհումը և զբաղվածության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները ենթադրում են փոքր բիզնեսի աճ: Փոքր բիզնեսն, այսպիսով, կարող է նպաստել զբաղվածության խնդրի լուծմանը, քանի որ խոշոր արտադրության ոլորտում զբաղվածության կրճատումը կփոխհատուցվի փոքր բիզնեսի ոլորտում զբաղվածության աճով:
- 2) Մրցակցության աճը փոքր բիզնեսին թույլ է տալիս արագորեն համակերպվել որակի նոր լափանիշների հետ: Այդպիսով, փոքր բիզնեսը թույլ է տալիս առավելադուրե՛ս օգտագործել մարդկային գործոնը և հատկապես Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններից հեռացած բարձր որակավորում ունեցող կադրերին և գիտական ներուժը:
- 3) Մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսությունը, որը նոր է ստեղծվում Հայաստանում, չի կարող լիարժեք գործել առանց մեծ թվով տնտեսավարող սուբյեկտների առկայության, առանց տարբեր լափերի ձեռնարկությունների: Այսպիսով, փոքր ձեռներեցությունը ներթափանցում և զարգացնում է կարծրացած տնտեսական կառույցները և նպաստում շուկայական տնտեսության ակտիվ աճին:
- 4) Փոքր ձեռնարկությունները հաճախ համալրում են արտադրական շղթայում երբևէ գոյացող բացերը, որոնք զբաղեցված չեն տվյալ ճյուղի խոշոր արդյունաբերության կողմից: Այս առումով փոքր ձեռնարկություններն աշխատում են խոշոր ձեռնարկությունների ենթակապալային պատվերներով, ապահովելով արտադրական ցիկլի անընդհատությունը:
- 5) Ավելի հիմնարար, գաղափարական առումով՝ փոքր բիզնեսի զարգացումը խթանում է անհատականության, ինքնուրույնության և ձեռներեցության սկզբունքների տարածումը հասարակության մեջ:
- 6) Վերջապես, այն աշակցում է տնտեսության նորացմանը, քանի որ տեխնիկական նորությունների զգալի մասն իրագործվում է այս ոլորտում:

Փոքր բիզնեսի կարևորության մասին է վկայում նաև համաշխարհային փորձը: Երկար ժամանակ թերազնահատվում էր փոքր բիզնեսի դերը տնտեսության կառուցվածքային վերափոխումների գործընթացում: Թվում էր, թի արևմուտքում ծավալվող, խոշորամասշտաբ արդյունաբերության վրա հիմնված ինդուստրիալացիան փոքր ձեռնարկություններին թողնում է երկրորդական դերերում: Սակայն Եվրոպայում 70-ականներին տեղի ունեցած կառուցվածքային ճգնաժամներից հետո պարզվեց, որ հենց խոշոր ձեռնարկությունները դժվարությամբ են հարմարվում երկրի ներսում և համաշխարհային շուկայում տեղի ունեցող փոփոխություններին:

⁶ Տնտեսական քաղաքականության հետադրուման և վերլուծության կենտրոնի ղեկույցը, Երևան, 1997 թ.:

րին: Այդ ժամանակներից հետագոտողների առջև ծառայած է ձեռնարկությունների օպտիմալ շափերի խնդիրը⁷:

Հարկ է նշել, որ ընդունված շափանիշներով (տե՛ս սահմանումները) աջխարհում գործող ձեռնարկությունների 90 %-ից ավելին պատկանում է փոքր ձեռնարկությունների կատեգորիային: Աշխատատեղի 60 %-ից ավելին զբաղված է փոքր ձեռնարկություններում: Փոքր ձեռնարկությունները գերակշռում են ծառայությունների, մանրածախ առևտրի և շինարարության ոլորտներում, այսինքն՝ տեղական և շրջանային շուկաներում: Փոքր բիզնեսը կարող է դառնալ հեռանկարային անի կարևորագույն գործոն փոքրամասշտաբ շուկաներում, որով կիրականանան նաև արդյունաբերական ենթակապալային պատվերների և նորությունների կիրառման ոլորտում նրա ծավալման հնարավորությունները⁸:

Այսպիսով, հաշվի առնելով փոքր ձեռներեցությանը բնորոշ նշված առանձնահատկությունները, Հայաստանի համար հատուկ կարևորություն ունի փոքր բիզնեսի պետական խրախուսման մասին օրենքի ընդունումը և անհրաժեշտ ենթակառուցյունների ստեղծումը: Փոքր և միջին ձեռնարկությունները Հայաստանում զարգանում են յուրահատուկ պայմաններում, որոնք ըստ էության տարբերվում են ըստ ճյուղերի և բնորոշ են անցումային շրջանում գտնվող երկրների համար: Փոքր ձեռնարկությունների զարգացման վրա ազդեցություն ունեցող յուրահատուկ պայմաններից ամենահիմնականն են՝

Իրավական և վարչական միջավայր: Վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանում ըստնվածքին մի շարք օրենքներ, որոնք ընդհանուր առմամբ բարելավեցին իրավական միջավայրը մասնավոր ձեռնարկությունների համար: Նորացվել են սեփականության, ձեռնարկությունների, սնանկացման և արտասահմանյան ներդրումների մասին օրենքները, որոնք կազմում են շուկայական հարաբերությունները կարգավորող իրավական համակարգը: Արտասահմանյան արժույթի մասին և արտահանման ու ներմուծմանը վերաբերվող լիբերալ օրենքները կենսականորեն անհրաժեշտ են հաջողակ տնտեսական գործելակերպ ծավալելու համար, քանի որ երկիրը էպպես կախված է այլ երկրների հետ ունեցած առևտրային կապերից: Վերջերս ՀՀ ԱԺ-ն ընդունեց ՀՀ Քաղաքացիական նոր օրենսգրքը, որը փոքր բիզնեսում քաղաքացիական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտի տեկունաքարային տարրերից մեկն է: Կարևոր հանգամանք է նաև այն, որ Հայաստանի դատարանական համակարգը գեռես գտնվում է կայացման շրջանում, ուստի տնտեսական վեճերի լուծման մեխանիզմը արդյունավետ չի գործում: Դատավարության համար հսկայական ժամանակ է պահանջվում, իսկ դա նշանակում է, որ օրենսդիր ամբողջ մեխանիզմը թերի է գործում:

Հարկային համակարգ: Հայաստանի հարկային համակարգը ներառում է 14 տեսակի հարկեր և տուրքեր: Որպես կանոն հարկատու են բոլոր ձեռնարկությունները, շնայած իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները ազատված են հաշվեկշռային հաշվետվություն պատրաստելու և այն հարկային տեսչություն ներկայացնելու պարտավորությունից: Գործնականում կան բազմաթիվ տարբերակներ, որոնց միջոցով կարելի է հեշտացնել հարկերի վճարման գործընթացը: Սակայն ձեռնարկություններից շատերը հարկերի և տուրքերի վճարման կարգի վերաբերյալ հստակ պատկերացում չունենալու պատճառով ստիպված են հաղթահարել բազմաթիվ բյուրոկրատական խոչընդոտներ: Եահոթահարգի՝ վերջերս սահմանված նոր դրույքաշափերը դրափունորեն կանդաղառնան փոքր ձեռնարկությունների վրա:

Հայաստանում դեռևս գոյություն չունեն ձեռնարկությունների պետական աջակցման, հատկապես ֆինանսական աջակցության ծրագրեր: Մինչև 1996 թվականը փաստորեն գոյություն չունեին հատուկ պետական մարմիններ, որոնք պետք է զբաղվեն փոքր ձեռնարկությունների խնդիրներով: Գործում էին միայն մի քանի միջազգային կազմակերպություններ, որոնք զբաղվում էին փոքր ձեռնարկությունների ֆինանսավորման և զարգացման խնդիրներով: Դրանցից հիմնականներն են՝ «Հայաստանի ձեռներեցության աջակցման կենտրոնը» (ABSC), կազմակերպություն, որը ստեղծվել է Եվրոմիության TACIS ծրագրի շրջանակներում, փոքր ձեռնարկությունների մասնագիտական տեխնիկական աջակցություն ապահովելու համար, և ամերիկյան EURASIA FOUNDATION կազմակերպությունը, որը գործում է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ և վարկեր ու դրամաշնորհներ է արամադրում փոքր ձեռնարկություններին: Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը կից ստեղծված է արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կոորդինացման կենտրոն, որը կոորդինացնում է արտասահմանյան ծրագրերը նաև փոքր բիզնեսի ոլորտում: ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարությունում գործում է փոքր բիզնեսի հարցերով զբաղվող վարչություն: 1998 թ. EDIPA կազմակերպության (այն ստեղծվել էր 1996 թ. Համաշխարհ-

⁷ S. D. Storey, The Growing Importance of Small Business Sector in UK Economy, Univ. of Wolverhampton, 1996, էջ 58-61:

⁸ S. Bannock & Hock, Global Inveeseigation of Trends in Small Business, London, 1993, էջ 34-39:

հային բանկը վարկով) վերակազմավորման արդյունքում և ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության նախաձեռնությամբ ստեղծվեց «Ջարգացման հայկական գործակալությունը»։ Ընթացքում է, որ այն պետք է զբաղվի արտասահմանյան ներդրումների խթանումով, ինչպես նաև ձեռնարկությունների զարգացման ծրագրերով։ Բանակցությունների փուլում են գտնվում գերմանական KfW կազմակերպության և Եվրոպայի զարգացման և վերակառուցման բանկի փոքր և միջին ձեռնարկությունների համար վարկային գծերի տրամադրման հարցերը։ Սակայն վերջը նշված կազմակերպությունների գործունեությունը ընդհանուր առմամբ դեռևս չի կարող բավարար համարվել Հայաստանում փոքր բիզնեսին էական աջակցություն ցույց տալու համար։

Հայաստանի արդյունաբերական հսկաների մեծամասնությունը՝ խոշոր արտահանող ձեռնարկությունները պլանային համակարգի փլուզման պատճառով կորցրեցին իրենց ավանդական շուկաները նախկին ԽՍՀՄ երկրներում։ Փանի որ փոքր ձեռնարկությունների որոշակի մասնաբաժին ենթակապալային պատվերների միջոցով կապված էր այդ ձեռնարկությունների հետ, ուստի այդ բարձր տեխնոլոգիաներ պահանջող ոլորտում աշխատող փոքր ձեռնարկությունները նույնպես կորցրեցին իրենց շուկաները։ Կարևորագույն խնդիր է նաև այն, որ Հայաստանի ետերկայիս պայմաններում ծայրահեղ բարդացված է ապրանքների արտահանումն ու ներմուծումը։ Մեծածավալ բևեռներ արտահանող ձեռնարկությունները (հաստոցաշինական, շինարարական, քիմիական գործարաններ) փաստորեն կտրված են իրենց շուկաներից։ Վերջապես, թերություններից մեկն էլ այն է, որ հեռախոսակապի և հաղորդակցությունների համակարգի հնացման պատճառով ծայրահեղ բարդացված է Երևան քաղաքի կապը շրջանների և արտասահմանյան երկրների հետ, անբավարար է կոմպյուտերային ցանցերի և ինտերնետի օգտագործումը։

А. В. БАРХУДАРЯН—Малый бизнес, как фактор структурных преобразований в экономике Армении.—Экономические реформы в Армении, имевшие целью трансформирование хозяйства и создание частного сектора, привели к коренному структурному преобразованию экономики страны. Хотя и трудно оценить масштаб деятельности в секторе малого предпринимательства, складывается общее заключение, что этот сектор крайне важен для экономического развития Армении. Факторы стабилизации, оживления и развития экономической системы Армении самым непосредственным образом связаны с выработкой стратегических решений в этой сфере.

en,
zaw
...
В
лиот
кусо
скин
ция
тие
ве...
анск
стор
без
скин
Рэ
воля
Пе
ния
чать
ния
нве
женн
исхо
пяте
лите
дит
ся д
«Лит
точн
того
ром
эфно
(«К
древ
ягне
изоб
хайн
«Сол
мент
гели
«Пей
рель
свящ
дую
чита
расп
Ковь